

ՀԱՏԿԱՆԻՇԻ ԱՌԱՐԿԱՅԱՑՄԱՄԲ ԴՐՍԵՎՈՐՎՈՂ ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱՆԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ

Լեզվաբանական դրականության մեջ կարծիքներ են արտահայտվել, թե անորոշ դերայի հոլովումը կապված չէ փոխանունության հետ, որ հոլովվող անորոշը փոխանուն չէ, ունի թե՛ բայի, թե՛ գոյականի հատկանիշներ, նաև գոյական է։ Այսպիսի կարծիքները հիմնվում են երկու փաստարկումների վրա՝ 1) փոխանունները ենթարկվում են ի հոլովման, իսկ անորոշ դերայի՝ Ու, 2) անորոշ դերայի այլ առարկայի իմաստ չի ներառում, հոլովվող անորոշ դերայի իմաստը յուրահատուկ է։ Այս պատճառաբանությունները, սակայն, հիմնավոր չեն։ Փաստերի համակողմանի դիտարկումները այլ արդյունքի են հանգեցնում։ Նախ ճիշտ չէ այն տեսակետը, թե հայերենում փոխանունները ենթարկվում են միայն ի հոլովման։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ենթարկվում են նաև Ու հոլովման։

Հայտնի է, որ բառի այս կամ այն հոլովման ենթարկվելու հարցում վճռական դեր ունեն տարբեր բառախմբերի ձևային ու իմաստային առանձնահատկությունները։ Հստ որում, ոչ միայն ջարահյուսական-ոճական զանազան կիրառությունների, այլև փոխանվանական գործածության դեպքում տարբեր հոլովումների ենթարկվող բառերը պահպանում են իրենց ձևաբանական առանձնահատկությունները, այսինքն՝ իմաստային փոխանունությանը զուգակցվող բառը պահպանում է իր ճշգրիտ առանձնահատկությունը, իր ճշգրիտը։ Այս օրինակաբանության հիման վրա ի հոլովման ենթարկվող բառը փոխանվանաբար գործածությամբ ստանում է ի հոլովիչ, Ու հոլովման բառը՝ աւ հոլովիչ։ Օրինակներ՝ «Աշխարհի լավը բաժանեմ վատից... Բա որ սխալմունք լինի ու քացը շորի հետ վառվի» (ՄՍՔՆ, 90)։ Նա չէր ցանկանում հանդիպել միտաստուն։ Չկար ամենախեղաքին։ Կորցրել էին ամենախելացուն։

Վերջին օրինակներում փոխանունները ստացել են ու հոլովիչ։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև միտասունի և ամենախելացի բառերը ունեն Ու հոլովմանը հատուկ ձևային հատկանիշներ։

Վաղուց նկատված է, որ փոխանուն դառնում են այն բառերը, որոնք ունեն գոյականական լրացման կիրառություն, հանդես են գալիս որպես որոշիչ և հատկացուցիչ¹։ Ընդ որում, նախկին լրացումը (որոշիչ, հատկացուցիչ) կարող է արտահայտվել նաև լրացյալի (որոշյալ, հատկացյալ) իմաստով։ Այդպիսի լրացումներ են դառնում ածականը, թվականը, սրանց հարաբերակից դերանունները, հարակատար ու ենթակայական դերբայները և գոյականը (վերջինս միայն թե՛ հոլովաներով գործածվելիս)։ Սրանք էլ հիմնականում ենթարկվում են ի հոլովման, միայն չնչին մասը՝ Ու հոլովման։ Այլ հոլովման ենթարկվող բառեր սրանց մեջ չենք տեսնում։ Իսկ դա ամենակարևոր հանգամանքն է այս դեպքում, որովհետև որևէ բառ (ասենք՝ ածականը) որպես սկզբնականին փոխանուն գործածվելիս պահպանում է իր ճշգրիտը (չեղտում ենք սկզբնականին², որովհետև հոլովաձևային փոխանունները միշտ ենթարկվում են ի հոլովման)։ Եթե ունենայինք նաև Ու, Վա, Ա, Ց և այլ հոլովումների ենթարկվող ածական որոշիչներ, ապա կունենայինք նաև նույն հոլովումներին ենթարկվող փոխանուններ։

Այսպիսով, փոխանունների առավելագույն ի հոլովման ենթարկվելու հատկությունը բխում է ոչ թե դրանց բուն էությունից, այլ փոխանուն դարձող բառերի ձևային-ձևաբանական առանձնահատկությունից։ Եվ քանի որ այլ հոլովման ենթարկվելու ձևային հատկանիշով օժտված ածա-

¹ Ս. Արա հ ա մ յ ա ն, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 194—205, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 254, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Հ. Ա., Երևան, 1970, էջ 105—106, Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 395—527, է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 58—60։

² Նկատի ունենք սովորական փոխանունը՝ ի տարբերություն հոլովաձևայինի։

զգացմունքների արտահայտություն է», «Պատասխանել-ը բազմապատկ է, տսվ-ը՝ միապատկ» օրինակներում փոխանունները արտահայտում են իրենց անվանումները. դեպի-ն նշանակում է «դեպի բառը/կապը», ախ-ը՝ «ախ ձայնարկությունը/բառը», պատասխանել-ը՝ «պատասխանելու/դերբայը/բառը/լրահանգ» (բայց ոչ «պատասխանել» գործողությունը)։

Ֆանի որ բոլոր տեսակի անվանումները (նաև քերականական միավորների) և տերմինները որպես խոսքի մաս գոյականներ են, ուստի դեպի-ն, ախ-ը, պատասխանել-ը, ներառելով նշված անվանումների իմաստները, ձևեր են բերում առարկայական իմաստ և դառնում փոխանուններ։

Իրեն ինքնանվանողական փոխանուն գործածվելիս անորոշ դերբայը ստանում է ի հոլովը, ինչպես՝ «ծխել-ի և ծխալ-ի միջև կա իմաստային տարբերություն»։

Անորոշ դերբայի փոխանունական ձևերը փոխանուն չհամարվելու տեսակետին նպաստում է այդ ձևերի իմաստային ինքնատիպությունը։ Եթե սովորական փոխանունը ընդգրկում է նախկին լրացյալի կամ երկրորդ գոյականի իմաստը, որը տարբեր է իր բառական իմաստից, ապա այդ նույնությունը չի կարելի ասել հոլովվող անորոշ դերբայի մասին։ Մեքսիկացի ճիվանդությունը ծանրացրեց օրինակում մեքսիկ-ը մի այլ բան չի նշում, քան համապատասխան գործողությունը։ Դրա մեջ բայական և անվանական (գործողություն և առարկայի) իմաստների տարբերությունը հասել է նվազագույնի։ Ուստի նման դեպքերում դերբայը կարելի է փոխարինել համապատասխան լրացյալով՝ ժպտալը—ժպտելը, վազելը—վազելը և այլն։ Այդպես էլ ավարտվում է դրանց ընդհանրությունը. ժպտալ, վազել բայեր են, իսկ ժպտել, վազել՝ գոյականներ։ Դրանք տարբեր խոսքի մասեր են և թելադրում են տարբեր հարցեր, իսկ եթե դերբայը գործածվում է փոխանունաբար, ստանձնելով գոյականի շարահյուսական դերը՝ միևնույն հարցը. ի՞նչը—ժպտալը, ժպտելը և այլն։ Սակայն այս դեպքում դերբայն ստանում է գոյականական ձևավորում, գոյականին հատուկ ձևաբանական մասնիկներ՝ պայմանավորված նրա շարահյուսական դերով։ Սա էլ իր հերթին ապացուցում է, որ դերբայը տարբեր է գոյականից և առանց գոյականական վերջավորության գուրկ է նրա հետ ունեցած քերականական-խոսքիմաստային թեկուզ ժամանակավոր ընդհանրությունից։

Փոխանունաբար գործածված անորոշ դերբայը⁷ ժամանակավորապես առարկայացվում, ներկայացվում է իրեն գոյական (դա չի նշանակում, թե այն դառնում է գոյական, որովհետև անցողիկ, ժամանակավոր և կայուն, մշտական հատկանիշները միևնույնը չեն)։ Այս դեպքում յուրահատուկն այն է, որ «դերբայը փոխանունաբար հանդես է գալիս իր իսկ իմաստի մտացի առարկայացումով, ի տարբերություն այլ խոսքի մասերի, որոնք ժամանակավորապես համատեղում են հատկանիշի և այդ հատկանիշն ունեցող առարկայի իմաստները»։

Փոխանուն դերբայը, ստանալով գոյականական ձևավորում և կիրառություն, այսուհանդերձ, պահպանում է բայական մի շարք հատկանիշներ, որոնցից գուրկ է գոյականը. ա) բայական ձևավորումը, որը շատ կարևոր է (թեև կան սակավաթիվ փոխանուններ՝ գրող, ծնող, մեռել և այլն). հայերենում սեփական ձևավորում ունեցող միակ խոսքի մասը բայն է՝ գրեթե ամբողջ հարացություն, և իրեն բայ է ընկալվում թե՛ իմաստի, թե՛ ձևի շնորհիվ։ Այս դեպքում գոյականական վերջավորությունը դրվում է բայական ձևի վրա՝ գրել, գրելը, գրելով և այլն. բ) բայը պահպանում է բայական խնդրառությունը, որը տարբեր է համարմատ գոյականի խնդրառությունից, ինչպես՝ նկար գիտելը, նկարի գիտումը (հնարավոր չէ նկար գիտումը). գ) բայը պահանում է բայական չ, վ և այլ մասնիկների ընդունման հատկանիշը՝ գիտելը—գիտվելը, շղիտելը. հնարավոր չեն՝ գիտվումը, շղիտվումը⁸։

Անորոշ դերբայի փոխանունության յուրահատկությունը կապված է մի ինքնատիպության հետ, որը բավական ընդհանուր օրինաչափություն է և բխում է լեզվի (և մտածողության) ընդհանրացնող, վերացարկող բնույթից։ Բանն այն է, որ առարկայի հատկանիշ արտահայտող խոսքի մասերին հատուկ է փոխանունության մի յուրահատուկ դրսևորում, որն առայժմ բավարար

⁷ Գ. Զահուկյանը, դերբայները դասակարգելով ըստ գործառական արժեքի, անորոշը (իր անվանումով՝ դերգոյական կամ անորոշ բայաձև) բնութագրում է որպես «հիմնականում գոյականական գործածություն ունեցող դերբայ և ժխտում է նրա փոխանունությունը [հիմն. թժամանակակից հայերենի անդամ բայաձևերը» («Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 3, էջ 51—52)։ Մեր մոտեցումը տարբերվում է։

⁸ Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. Ա, Երևան, 1963, էջ 371։

⁹ Մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի անդամ բայաձևերը («Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 3, էջ 44—45)։

ուշադրության չի արժանացել և հստակորեն չի տարբերակված՝ ամբողջությամբ վերցված նկատի ունենալ հատկանիշի վերացարկման, բացառականացման, առարկայացման երևույթը, որը հատուկ է թվականին, ածականին և դերբային:

Թվականի կապակցությամբ այդ իրողությունը վաղուց է դիտված: Գրականության մեջ ներշնչվում է, որ թվականը առարկաների քանակային հատկանիշին զուգահեռ ցույց է տալիս թիվ, թվային բացարձակ մեծություն, թվերի վերացական հասկացություն¹⁰, է. Աղայանը նկատել է, որ «խոսքից դուրս թվականներն արտահայտում են բացարձակ ու վերացական մեծության հասկացություն»¹¹, Ուշագրավ է Հ. Բարսեղյանի մեկնաբանությունը. թվականները հանդես են գալիս նաև «որպես քանակային բացարձակ մեծություններ, առանց նկատի առնելու կոնկրետ առարկաները... Որպես բառային իմաստներ, բացարձակ թվականների այդ քանակային վերացական հասկացությունները բոլորովին զուրկ են առարկայականությունից և միանգամայն տարբեր են բոլոր այլ կարգի վերացական գոյականներից»¹²:

Խնդիրը փոխանունության տեսանկյունից դիտելով՝ Ս. Աբրահամյանը թվականների կապակցությամբ առանձնացնում է իմաստային փոխանունության «երկու կարգի դրսևորում. ա) փոխանվան մեջ ներառնված առարկայական իմաստը կարող է լինել որևէ առարկայի իմաստ, բ) չներառնված առարկայական իմաստը, սակայն, կարող է չլինել այս կամ այն առարկայի իմաստ: Օրինակ, Ձորքը երկուսի կրկնապատիկն է»¹³: Այս դեպքում «ոչ թե տվյալ փոխանվան մեջ ներառնվում է որևէ առարկայի իմաստ, այլ արդարապես հատկանիշն է առարկայացվում և դիտվում որպես ինքնին գոյություն ունեցող»¹⁴:

Անհրաժեշտ է հզրակացնել, որ հատկանիշի մտովի առարկայացումը բնորոշ է ինչպես առարկաների քանակային, այնպես էլ որակային՝ հարաբերականորեն կայուն և փոփոխալիս հատկանիշներին: Համապատասխան կիրառությամբ անվանով և ձեռքայով արտահայտվող հատկանիշներն էլ որոշ դեպքերում կարող են վերացարկվել, կտրվել կրողներից և դիտվել իրրեկ «ինքնուրույն գոյություն ունեցող» առարկաներ՝ իմաստային տարբեր երանգներով: Գ. Ջահուկյանը անորոշորակ է այդ իրողությանը: Բացի փոխանվանական հայտնի դրսևորումներից, նա նշում է նաև հետևյալը. «Որոշլային բառերը կարող են իրրեկ ենթակա հանդես դալ... բ) երբ որոշիչը, հատկապես ածականը, առնվում է որպես հատկության անուն [«Կարմիրը (—կարմրությունը, կարմիր գույնը) արյան գույն է»]: Երկրորդ դեպքը կարելի է դիտել որպես առաջինի մի դրսևորում, երբ որպես գոյական լրացվում ենթադրվում է տվյալ հատկությունները խմբավորող որևէ վերացական գոյական (գույն, ձև, ուղղություն, քանակ և այլն)»¹⁵:

Եւրեմն, հատկություն արտահայտող բառը՝ ածականը, հանդես է գալիս որպես հատկանիշ օղակաճանգի անուն, ղառնում է փոխանուն՝ հատկանիշի առարկայացման հիման վրա: Բերենք օրինակներ. «Մտորակը ճամբարի համար է, համարույրը՝ տան: Մալլը՝ ճամբարի, ժպտը՝ տան: Դաժանություն՝ այնտեղ, հեղություն՝ այստեղ» (ՄՍ, 2, 509): «Ուղղեցի նկարը և թեքությամբ հանեցի մահճակալին: Հին բրոնզագույն շրջանակը ծանր ընկղմվեց փափուկի մեջ» (ԵԵ): «Կհամոզե՞ր կապույտի մեջ ճախրող աղավինների ներմակը (ՍՀ): Տխուր են երգերս, եղբայր, Խխուրս եմ ժառանգել մորից: Ակներև է, որ օրինակներում ածականներով արտահայտված հատկանիշները վերացարկված են, մտովի կտրված են կրող առարկաներից, ստացել են ինչ-որ ինքնուրույնություն, առարկայականություն, —ուրյուն ածանցով կազմված գոյականի արժեք. Խխուրս նշանակում է տխրություն, մալլը՝ մալլություն և այլն: Ուրիշ առարկաների իմաստները ներառված չեն: Այստեղ հատկանիշը (օրինակ՝ մալլ) չի ընդգրկում որևէ առարկայի իմաստ, չունի նաև փոխաբերական իմաստ (ինչպես ռև-ը գործածվում է վշտի նշանակությամբ, ասլիտակ-ը անմեղության և այլն):

Գտնալիս հատկանիշ ցույց տվող փոխանուն ածականները կարող են ներառել «գույն» առարկայի նշանակությունը: Օրինակներ. «Կլոր ու ճերմակ դեմքը շրջանակված էր ղեղինով խառն սև մորուքի մը» (ՀՊ, 275): «Զյունը լուսավոր ասեղներ էր խում բիրբերի մեջ, և կարմիրը, ջա-

10 «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Երևան, 1974, էջ 185:

11 Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 292:

12 Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980, էջ 500:

13 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1975, էջ 86:

14 Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը..., էջ 213:

15 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, էջ 393:

ուսմանը խնդրում էին տեսողությունը» (ՄՍ, 2, 509)։ Վարձարանում էր լույսն արեգական, և մոխր կապույտով, կապույտը մանուշակագույնով. մանուշակագույնը ոսկով ու ոսկին բոցով էր վառվում» (ն. տ., 689)։ Սարյանի վաղ շրջանի կտավներում իշխող էր կապույտը, իսկ հետագայում՝ դեղինը, կարմիրը, նարնջագույնը։ Ընդգծված փոխանունները՝ դեղինը, կարմիրը և այլն, այս կամ այն առարկայի իմաստ չեն ներառել, վերցված են որպես գունային հատկանիշներ։ Սրանց մեջ եղած առարկայական իմաստն այն է, ինչ ընդհանուր է այս բոլորի միջև, այսինքն՝ «գույն» իմաստը. նշանակում են՝ գեղին գույն, կարմիր գույն և այլն։ Բայց դեղինն ինքը գույն է, ինչպես և մյուսները։ Եթե փիլիսոփայական տեսանկյունից մոտենանք, պետք է ասենք, որ «գույն» հասկացությունն առանց դեղինի և մյուսների չի լինում, կազմված է առանձին գույներից և այդ բոլորի ընդհանուր անվանումն է (ինչպես որ վերացական ծառ գոյություն չունի՝ թզենուց և մյուսներից անկախ)։ Այստեղ դրսևորվում է եզակիի և ընդհանուրի կապը, և եզակին արտահայտում է ընդհանուրի, մասնավորը՝ տեսակի իմաստը, որը վերջին հանգիստով իր իմաստն է (թեև ավելի լայն ու ընդհանուր) և ոչ թե մի այլ առարկայի շեղանդան է, որ գունային հատկանիշը իր բազմազանությամբ (կամ բազմանշանությամբ) շնորհիվ ունի իր ընդհանուր «գույն» անվանումը, իսկ երկու հակադիր եզրերով ընկալվող (բարձր-ցածր, հաստ-բարակ) հատկանիշների ընդհանուր անվանումը մեծ մասամբ լինում է եզրերից մեկի ածանցմամբ (և ոչ մի այլ՝ շեղանդանով) կազմված գոյական՝ բարձրություն, հաստություն և այլն։

Ուրեմն գոյություն ունի անվանի փոխանունական գործածության մի դեպք, երբ տվյալ փոխանուն մեջ ոչ թե ներառվում է որևէ առարկայի իմաստ, այլ պարզապես հատկանիշն է առարկայացվում, ինչպես տեսնում ենք, ածականի այս կիրառությունը բացարձակ ընդհանրություն ունի թվականի համանուն կիրառության հետ (արտահայտվում է վերացարկված հատկանիշի հասկացություն), իսկ դրանց միջև եղած տարբերությունը համապատասխանում է դրանց քերականական, այսինքն՝ խոսքիմասային իմաստների տարբերությանը։

Նշելի է նաև, որ վերացարկումը խիստ բազմազան է¹⁶։ Այն ներառում է առարկայական տարբեր իմաստներ, երբեմն էլ այնպիսի անորոշ ու լայն ընդգրկումներ, որոնք հնարավոր է արտահայտել միայն ամենալայն ու ամենաանորոշ բովանդակությունն ունեցող բան գոյականով։ Օրինակներ՝ «Այս փաթիլի մեջ՝ նորացող մի ճիւղ, հնացող մի նոսր այս փաթիլի մեջ» (ԱՎ), «Ետի մեջ միշտ նորոգվող դարավորը, դարավորին եղբայրացած նորը» (ՄԱ, 2, 490)։ Այդ աղջկա հոգին հասունանում էր սիրով բոլորի և ամեն լավի նկատմամբ։ Ընդգծված ածականների իմաստները դժվար է կոնկրետ առարկաների հետ կապել՝ խիստ լայն ու անորոշ առարկայական ընդգրկման պատճառով։ Ի դեպ, այդպիսի փոխանունները լայնորեն գործածվում են գրականագիտական, փիլիսոփայական և այլ աշխատանքների մեջ, ինչպես՝ վեպեր, իրակներ, ցանկալիք, ստորեր և այլն։

Թվականի և ածականի այսպիսի փոխանունության հետ ընդհանրություն ունի նաև անոճող դերբայի գործածությունը։ Այս դեպքում ևս գործ ունենք միևնույն օրինաչափության հետ։ Գ. Զա-հուկյանի՝ վերևում նշված այն դիտարկմանը, թե «որպես գոյական լրացյալ ենթադրվում է տրվյալ հատկությունները խմբավորող որևէ վերացական գոյական (գույն, ձև, ուղղություն, քանակ և այլն)», կարելի է ավելացնել նաև «գործողություն»՝ նկատի ունենալով բայը (դերբայը), որպես առարկայի փոփոխային հատկություն։

Գոյականաբար գործածված անորոշ դերբայը ոչ թե ներառում է որևէ առարկայի իմաստ, այլ՝ ա) գոյականին հատուկ ձևաբանական մանրիկավորմամբ արտահայտում է գործողություն հատկանիշը, իբրև առարկայացված վերացություն, բ) միաժամանակ կոնկրետ գործողություններ ներառում է տարբեր գործողությունների միջև եղած բնականորեն «գործողություն» իմաստը. այսպես՝ երգելը նշանակում է երգելու գործողություններ և այլն։ Այս դեպքում էլ մասնավորը ներառում, արտահայտում է ընդհանուրի իմաստը։

Այսպիսով, փոխանունության բովանդակության պլանի քննությունից հետևում է, որ իմաստային փոխանունություններ ունի երկու դրսևորում, երկու ենթատեսակ՝ 1) փոխանունը ներառում է որևէ առարկայի, լրացյալի իմաստը, ենթադրվում է որևէ գոյական (դա շատ տարածված երե-վույթ է), 2) փոխանունը ներառած առարկայական իմաստը այս կամ այն առարկայի իմաստը չէ, այլ (առարկայի) հատկանիշն է վերացարկվում, առարկայացվում։ Այս դեպքում տվյալ հատկանիշը ձևեր է բերում իմաստային որոշ ընդլայնում, ա) իբրև ընդհանուրն այն մասնավոր ի-

16 Հմմտ. Մ. Ասատրյան, Նշվ. աշխ., հ. Բ, էջ 34։

մաստներին, որոնք կան իր և իրեն հավասար միավորների միջև (սպիտակի, դեղինի միջև՝ զաւն, երգելի-ի, գրելի-ի միջև՝ զործողություն, երեք-ի, չորս-ի միջև՝ թիվ կամ զքանակային մեծություն, նշանակությունը), բ) կամ -ուրումն ածանցող նշվող իմաստը՝ սպիտակություն և այլն: Այսինքն՝ ենթատեսակը ներառում է տեսակի նշանակությունը, որը մտովի առարկայացվում է: Այսպիսի փոխանվան համար չկա նախապես և, բե՛ զոյականի լրացում դառնալու անհրաժեշտություն: Սակարեւի է անվանել հատկանիշի առարկայացմամբ գրեւորվող փոխանունություն:

Թեև հատկանիշի առարկայացմամբ դրսևորվող փոխանունության հնարավորություն ունեն առարկայի հատկանիշ արտահայտող խոսքի մասերը, բայց դրանք նման կիրառությամբ հանգնում են զաւնի առ հավասարաչափ. ածականը՝ երբեմն, թվականը՝ լայնորեն, անորոշ դերբայը՝ գրելիս: Դա հասկանալի է, որովհետև առաջին երկուսը այնքան հաճախ են լրացյալի իմաստի ներառմամբ գործածվում, որ իրենց իմաստների (որակային ու քանակային հատկանիշների) առարկայացումը դրանց համար (հատկապես ածականի) հաղվադեպ, գրեթե անկատարի երեւոյթ է (եթե մասթեմատիկայի ոլորտը թողնենք՝ նաև թվականի համար):

Դերբայներից հարակատարը և ենթակայականը ևս փոխանուն են դառնում որոշիչային կիրառության հիման վրա: Այլ է անորոշ դերբայի հարցը: Այն շունի որոշիչային կիրառություն (չհաղած փոխանուն սեռականը), և նրա փոխանունությունը դրսևորվում է սեփական իմաստի՝ փոփոխային հատկանիշի վերացարկմամբ ու առարկայացմամբ:

Այսպիսով, անորոշ դերբային հատուկ են փոխանունության երկու դրսևորումները՝ ա) ինքնանշանադրական և բ) իմաստային երկրորդ ենթատեսակը՝ իր իսկ առտաճայտած հատկանիշի առարկայացմամբ: Հնդ որում, առաջին դեպքում փոխանուն անորոշ դերբայը ենթարկվում է ի, երկրորդ դեպքում՝ Ու հոլովման: Համեմատենք հետևյալ օրինակները. «Վազել-ի վրա շեշտ նշանակեց և Վազելում խանգարեցին»: «Խոսել-ից հետո ստորակետ դիրք և «Խոսելուց հետո նստեց»:

Փոխանվան և խոսքիմասային փոխանցման տարբերությունների մասին կարելի է ասել, որ փոխանվանաբար գործածվելիս հատկանիշ արտահայտող բառերը առարկայական իմաստ են ներառում և առարկայացվում, զոյականացվում են ժամանակավորապես: Այս դեպքում դրանք ստանում են քերականական ձևավորում՝ ի դեմս զոյականական վերջավորությունների (ներառյալ զրո վերջավորությունը): Իսկ երբ տեղի է ունենում խոսքիմասային փոխանցում, հատկանիշը առարկայացվում է մշտապես: Այս անգամ բառը ստանում է բառակազմական ձևավորում՝ ի դեմս զոյականակերտ ածանցների (որոշ դեպքում՝ նաև առանց ածանցների): Օրինակներ՝ կարմիրը, մոայլը, երեքը, խոսելը և կարմրությունը, մոայլությունը, եռյակը, խոսքը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ—ԱՎ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973

ԱՎ—«Ավանգարդ», 29. I. 1984

ԳԹ—«Գրական թերթ», 1. I. 1981

ԵՆ—«Երեկոյան Երևան», 4. VII. 1983

ԵՂ—Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1971

ԷՋ—Է. Զրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972

ՀԹ—Հ. Թումանյան, Երկեր, Երևան, 1980

ՀՊ—Հ. Պարոնյան, Երկեր, Երևան, 1969

ՂՓ—Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982

ՄԳ—Մ. Գալշտյան, Զորի Միրոն, Երևան, 1983

ՄՍ—Մ. Սարգսյան, Երկեր, հ. 2, Երևան, 1977

ՄՍՔՆ—Մ. Սարգսյան, Քաշ Նազար, Երևան, 1979

ՌՍ—Ռ. Ստիվենսոն, Գանձերի կղզին, Երևան, 1959

ՍԶԴՏ—Ի. Սմիռնով, Ե. Զայցև, Դատավարություն Տեկիոյում, Երևան, 1979

ՍՀ—«Սովետական Հայաստան», 18. X. 1981

О СУБСТАНТИВАЦИИ, ПРОЯВЛЕННОЙ АБСТРАГИРОВАНИЕМ
ПРИЗНАКА

ВАНИК ЦАРУКЯН

Р е з ю м е

Самоименуемые субстантиваты склоняются по образцу *ի*, независимо от основного склонения, между тем как семантические субстантиваты сохраняют первичное склонение. Следовательно, склонение инфинитива по образцу *ու* не является аргументом отрицания его субстантивационного употребления.

Вторая разновидность семантической субстантивации проявляется абстрагированием признака, когда устойчивый или процессуальный признак функционирует как имя существительное, выражая значение абстрактного предмета.

Части речи, обозначающие признак, в указанной функции выступают неравномерно: инфинитив—чаще, числительные—широко, прилагательные—реже. Инфинитиву свойственны двойные проявления субстантивации: а) самоименуемая, б) абстрагированием признака.